«Շիրակի ուսուցիչների միություն» գիտակրթական կենտրոն ՀԿ
վերապատրաստող կազմակերպություն

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա -21-րդ դարի հմտությունները և հատկանիշերը.

Դպրոց- Գյումրու Ակադեմիական վարժարան

Առարկա -ֆիզիկա

Կատարող՝ Մկրտչյան Լիանա

Ղեկավար՝ Կարինե Ալեքսանյան

ԳՅՈՒՄՐԻ 2023թ.

Բովանդակություն

Ներածություն……..……...3

Գլուխ առաջին: Քննադատական մտածողության դրսևորումները---------- -5

Գլուխ երկրորդ: Համագործակցության ուսուցման տարրերը:----------8

Եզրակացություններ ……. 19

Օգտագործված էլեկտրոնային աղբյուրներ և տպագիր գրականություն.....10

Ներածություն

Արդի աշխարհում կրթությունը վերաճել է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ:

Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայում և հանրակրթական ուսումնական հաստատությունների՝ որպես հանրային կրթության հիմնական օղակի նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում:

Միջազգային տարբեր փաստաթղթեր մինչև կրթության որակին անդրադառնալը շեշտում են կրթության անօտարելի իրավունքը, որպես մարդու իրավունքների կարևորագույն մի ոլորտ և շատ դեպքերում հենց մարդու իրավունքների համատքեստում էլ դիտարկվում է կրթության իրավունքը և հետևաբար նաև որակյալ կրթության իրավունքի իրացումը:

Յունեսկոն սահմանել է որակյալ կրթության հիմնասյուները, որոնք են

ա) սովորել իմանալու համար, որը ենթադրում է ամենօրյա գիտելիքների զարգացում,

բ) սովորել անելու համար, որը ենթադրում է գիտելիքների պրակտիկ իրագործում,

գ) սովորել համատեղ ապրելու համար, որը ենթադրում է այնպիսի կենսակերպի կառուցում, որտեղ չկա խտրականություն և կան զարգացման հավասար հնարավորություններ,

դ) սովորել լինելու համար, որը ենթադրում է այնպիսի հմտություններ, որոնք հնարավորություն կտան անհատին զարգացնելու իր ողջ հնարավորությունները:

Մեր ժամանակներում համաշխարհային տնտեսությունը,կրթությունը և գիտությունը շատ ավելի արագ են զարգանում, քան երբևէ: Արդի զարգացումներն իրենց անմիջական ներգործությունն են ունենում ողջ կրթական համակարգի, կրթական գործընթացի անմիջական մասնակիցների վրա՝ պայմանավորելով տարբեր խնդիրների առաջադրման և լուծման անհրաժեշտություն: Յուրաքանչյուր

մարդ, ներգրավված լինելով կրթության մեջ, ժամանակ առ ժամանակ իրեն գտնում է տարբեր գաղափարների մեջ խճճված։ Եվ այդ մտքերը, գաղափարները պտտվում են հիմնականում այս կարգի հարցերի շուրջ՝ «Ժամանակակից աշխարհում աշակերտները ի՞նչ պետք է իմանան, սովորեն և այլն» կամ՝ «Ընթացիկ ուսումնական տարվա մեջ ի՞նչը վերանայենք, որ հաջողության հասնենք», և նմանատիպ այլ հարցեր։ Այնուամենայնիվ, մինչև հստակ պատասխան ձևակերպելը միգուցե ժամանակակից աշխարհն այլ հարցերի առաջ մեզ կանգնեցնի, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել այն հմտություններին, որ արդեն ունենք կամ ցանկալի է հմտանալ մի այլ ուղղությամբ՝ «21-րդ դարի հմտությունները և հատկանիշերը. մանկավարժի ինքնագնահատում»։

Գլուխ առաջին : Քննադատական մտածողության դրսևորումները.

Քննադատական մտածողությունը ապացուցումների համակարգ է , որը կիրառվում է իրերի և իրադարձությունների վերլուծության համար՝ տալով հիմնավորված եզրակացություններ, և ստեղծում է հիմնավորված գնահատականներ, մեկնաբանություններ տալու հնարավորություն, ինչպես նաև իրավիճակին և խնդրին համապատասխան ճշգրտորեն կիրառել ստացված արդյունքները:

.Քննադատական մտածողություն-

Յուրաքանչյուր մարդ մտածում է:Բայց շատ հաճախ մեր մտածողությունը կողմնապահ է, հիմնավորված չէ:Մինչդեռ մեր կյանքը մեծապես կախված է մեր մտածողության որակից:

Քննադատական մտածողությունը մտածողության այն տեսակն է, երբ մարդը հարցականի տակ է դնում ստացվող տեղեկույթի հավաստիությունը, սեփական հավատալիքներն ու համոզմունքները:

Քննադատաբար մտածող մարդը կարողանում է.

1.հստակ ձևակերպել հարցեր և հիմնախնդիրներ

2.հիմնախնդիրներին վերաբերվող տեղեկություններ հավաքել և մեկնաբանել

3.կշռադատված եզրահանգումներ կատարել

4.բաց է այլոց կարծիքների հանդեպ

5.կարողանում է արդյունավետ հաղորդակցվել խնդիրներ լուծելու նպատակով

Քննադատական մտածողության կարևոր բաղադրիչներից է արդարամտությունը:

Քննադատական մտածողության դրսևորումներ են.

1.արժևորումը

2.հիմնավորումը

3.դասակարգումը

4.վերլուծությունը

Քննադատական մտածողությունը զարգացնելու համար շատ կարևոր է մշտապես մտածել հետևյալ հարցերի շուրջ.

1.Ի՞նչ է հետևում այս ամենից

2.Կարող ե՞ք բերել տվյալ միտքը հաստատող և ժխտող օրինակներ

3.Կարող ե՞ք բերել այլ իրավիճակներ,որոնցում տվյալ կանոնը գործում է

Քննադատական մտածողության առանձնահատկություններից մեկն էլ այն է,որ մտքերը պետք է լինեն հիմնավորված;

Ստորև ներկայացվում է հաղորդակցության ընթացքում հաճախակի օգտագործվող սխալներ.

Օրինակ՝ հաճախ մարդիկ ասում են.

1.<<Կան փաստեր,որ....>>:Ի՞նչ փաստեր,արդյոք աղբյուրը վստահելի է

2. .<<Փորձը ցույց է տալիս....>>:Ու՞մ փորձը,ինչպես է այն ցույց տալիս

3. .<<Հետազոտությունները վկայում են....>>:Ո՞ր հետազոտությունները,որքանով է այդ հետազոտությունը հավաստի

Քննադատական մտածողության համար անհրաժեշտ են գնահատելու, մեկնաբանություն, վերլուծություն, հետևություններ և եզրահանգումներ կատարելու կարողություններ ու հմտություններ, դիտողականություն։

ԽՆԴԻՐՆԵՐԻ ԼՈՒԾՈՒՄ

1. Արդյոք ձեր աշակերտներին խթանում, մղու՞մ եք կատարել այնպիսի բաներ, որ դեռևս չեն փորձել, որտեղ դուք ձեր աշակերտների հետ պետք է կրկին ու կրկին մտածեք, վերլուծեք ու լուծում առաջարկեք։
2. Արդյոք ձեր աշակերտներին խնդրու՞մ եք, որ հարցեր առաջադրեն իրենց իսկ ուրույն մտածողությամբ։
3. **2. Ստեղծարարություն-2 ժամ(տեսական-1ժամ,գործնական-1ժամ)**
4. մեթոդիկաներ և տեխնիկաներ, որոնք նպաստում են յուրօրինակ մտքերի համախմբմանն ու նոր մտքերի ստեղծման գործընթացին՝ օգնելով գտնել առաջացած խնդիրների և դժվարությունների համար նոր, յուրօրինակ մոտեցումներ և լուծումներ։ Ստեղծագործական գործունեության մեթոդիկաներն օգնում են ավելի հստակ ձևակերպել խնդիրները, արագացնում են նոր գաղափարներ գտնելու գործընթացը, ինչպես նաև ավելացնում են դրանց քանակը, լայնացնում են խնդիրների վերաբերյալ արդեն եղած տեսակետները և ոչնչացնում իմացական արգելքները։

5. Մեթոդիկաները որպես այդպիսին իրենցից ալգորիթմեր չեն ներկայացնում, որոնց հետևելով անպայման խնդիրների լուծումներ կարելի է գտնել, այլ տալիս են ուղղվածություն ու կարգուկանոն մտքերի ու գաղափարների առաջացման ու ուղղորդման համար: Մեթոդիկաները կրճատում են գաղափարների փնտրտուքի ժամանակը՝ կազմակերպելով և դարձնելով ավելի արդյունավետ բուն մտքերի որոնման գործընթացը: Գոյություն ունեն ստեղծարարության մեթոդիկաների ինչպես անհատական, այնպես էլ՝ խմբով կամ զույգերով աշխատելու ձևեր:

Ստեղծարարության մեթոդիկաների խնդիրները

- Խնդրի հստակ ձևակերպում
- Ելքային տվյալների հավաքագրում
- Ելքային տվյալների կառուցակարգման համար չափորոշիչների մշակում
- Կառուցակարգել ելքային տվյալները
- Բազմակողմանիորեն ուսումնասիրել ելքային տվյալները
- Լայնացնել խնդրահարույց իրավիճակի ենթաճյուղերը
- Խնդրի վերաբերյալ մի քանի տեսակետ մշակել
- Առաջ քաշել հնարավոր լուծումների առավելագույն քանակ
- Մշակել առավել հնարավոր լուծումներից ընտրություն կատարելու սկզբունք
- Հանել մտավոր արգելքները
- Արագացնել մտքերի գեներացման գործընթացը
- Դուրս բերել իսկապես արդյունավետ ու յուրօրինակ լուծումներ

Ուղեղային գրոհ

Խնդիրների լուծման օպերատիվ տարբերակներից մեկն է, որը հիմնված է ստեղծագործական գաղափարների հավաքագրման վրա, որի ընթացքում մասնակիցներին ասվում է տալ հնարավորինս շատ լուծումների տարբերակներ առկա խնդրին՝ անգամ ամենաֆանտաստիկ ու առաջին հայացքից անհնար թվացող: Որից հետո ասված տարբերակներից ընտրվում են ամենահնարավորները, որոնք կարող են լինել տվյալ իրավիճակի համար լավագույն լուծում: Դասվում է արագ գնահատման մեթոդների շարքին: Մեթոդը հայտնագործվել է գովազդային հայտնի

կազմակերպության տնօրեններից մեկի՝ Ալեքս Ասբորնի կողմից և նկարագրվել իր՝ «Ի՞նչպես հորինել» գրքում 1942 թ-ին։

Հենրի Ալշտուլերի խնդիրների հայտանգործման տեսություն

Մեթոդիկան հիմնվել է 1946 թ-ին գրող-ֆանատիկ Հենրի Ալշտուլերի կողմից։ Այն իրենից ներկայացնում է մեթոդոլոգիա, գործիքների համախումբ, գիտելիքների պահոց և տեխնոլոգիաների համախումբ, որոնց շնորհիվ մոդելավում են նորագույն գաղափարներ և որոշումներ։ Այն իրենից ներկայացնում է խնդրի ձևավորման գործիքներ և մեթոդներ, որոնց միջոցով կարողանում են ձևակերպել խնդիրներ, կատարել համակարգային վերլուծություն։ Ի տարբերություն «Ուղեղային գրոհ» մեթոդիակայի, այս մեթոդիկայի նպատակը համարվում է նոր համակարգի հայտնաբերումը կամ բարելավումը։

Դելֆիի մեթոդ

Մեթոդիկան թույլ է տալիս հարցերի, ուղեղային գրոհի միջոցով հասնել մաքսիմալ փոխհամաձայնության խնդրի լուծման հարցում։ Դելֆյան մեթոդի միջոցով իրականացվող վերլուծությունը անց է կացվում մի քանի փուլով, արդյունքները մշակվում են վիճակակգրական մեթոդների միջոցով։ Մեթոդի հիմնային սկզբունքը հետևյալում է՝ անկախ փորձագետների մի խումբ, ովքեր հաճախ չեն ճանաչում մեկը մյուսին, ավելի արդյունավետ են գնահատում ու կանխատեսում են արդյունքները, քան՝ մասնագիտական խմբերը։ Թույլ է տալիս խուսափել հակառակ տեսակետներ ունեցող մասնագետների միմյանց հետ բախումից, քանի որ բացառում է փորձագետների անմիջական շփումը մեկը մյուսի հետ և հետևաբար նաև խմբային փոխազդեցությունը, որը ծագում է համատեղ աշխատանքի ժամանակ և բացառվում է կարծիքների հարմարեցումը մեկը մյուսին։ Թույլ է տալիս հարցումներ անել անկախ ու առանձին՝ առանց մեկը մյուսի հետ շփվելու։

Սուբյեկտներն են՝

- Հետազոտողների խումբ, որոնցից յուրաքանչյուրը պատասխանում է առանձին՝ գրավոր ձևով
- Կազմակերպչական խումբ, որը միացնում է հետազոտողների կարծիքները մեկը մյուսին

Լատալ մտածողություն (Էդուարդ դը Բոնո)

Բրիտանացի բժիշկ Էդվարդ դե Բոնոն առաջարկել է ստեղծագործելու և մտածողության բազմաթիվ մեթոդիկաներ։ Նա հանդիսանում է լատալ մտածողության հեղինակը, որը տարբերվում է սովորական հորիզոնական մտածողության ձևերի վրա հիմնված մեթոդիկաներից նրանով, որ հարցականի տակ է դնում ելքային պայմանները։ Լատալ մտածողության տեսակներից մեկն է վեց գլխարկների մեթոդիկան (սպիտակ՝ վերլուծական մտածողություն, կարմիր՝ զգացմունքային մտածողություն, սև՝ քննադատական մտածողություն, դեղին՝ լավատեսակն մտածողություն, կանաչ՝ ստեղծագործական մածողություն, կապույտ՝ լայնածավալ մտածողություն)։ Մետաֆորիկ դիտանկյունից նայելիս՝ մարդը, կրելով գլխարկներից յուրաքանչյուրը, սկսում է խնդրին նայել տարբեր տեսակետներից։

Սինեկտիկա (Ուիլյամ Գորդոն)

Ստեղծարարության մեթոդիկան, որը ստացել է սինեկտիկա անվանումը, մշակվել է 1940-ական թվականներին Ուիլյամ Գորդոնի կողմից։ Այստեղ մասնակիցները փորձում են «հայտնին դարձնել տարօրինակ, իսկ տարօրինակը՝ հայտնի»։ Մեթոդիկան բաղկացած է 10 քայլերից. վերլուծություն և խնդրի որոշում, խնդրի լուծման ինքնաբուխ տարբերակների առաջարկում, խնդրի նոր ձևակերպում, ուղիղ մենախոսությունների կազմակերպում, սիմվոլիկ մենախոսությունների կազմակերպում, անձնային մենախոսությունների կազմակերպում, նորից ուղղակի մենախոսությունների կազմակերպում, մենախոսությունների դուրս բերումը խնդրի լուծման և մոտեցումների մշակման ուղղությամբ։

Ստեղծագործ կամ ստեղծարար մտածողության զարգացում աշակերտների մոտ

Ստեղծագործական մտածողությունը ֆունկցիոնալ գրագիտության բաղադրիչ է, որը հասկացվում է որպես անձի ՝ իր երևակայությունն օգտագործելու ունակություն ՝ գաղափարներ զարգացնելու և կատարելագործելու, նոր գիտելիքներ ձևավորելու և խնդիրներ լուծելու համար, որոնց նախկինում չի հանդիպել:

Ինչպե՞ս ձևավորել ստեղծարար մտածողություն:

Իրական կյանքում խնդիր լուծելու համար մենք դիմում ենք կա՛մ ուսումնասիրված օրինաչափությանը, կա՛մ մեր սեփական փորձին, կա՛մ շրջակա աշխարհից նախկինում անհայտ օրինակներին: Վերջին երկու մեթոդներից օգտվելու համար պետք է կարողանալ դիտել, մտածել, ապավինել այն, ինչ մարդը երբևէ տեսել, լսել

կամ զգացել է: Այս բոլոր հմտությունները կարող են երեխաներին սովորեցնել դպրոցական դասերին:

Ասոցիացիաների հավաքագրում

Ասոցիացիան կամ բոլորովին այլ առարկաների և երևույթների միջև կապը տեսնելու ունակությունը տալիս է երեխայի մտածողության ճկունություն, ինքնատիպություն և արտադրողականություն, թույլ է տալիս արագորեն գտնել անհրաժեշտ տեղեկատվությունը : Հանձնարարել երեխաներին համեմատել երկու առարկա, գտնել ընդհանուր հատկություններ և տարբերություններ: Սկզբում դրանք կարող են լինել մոտակա առարկաներ, այնուհետև՝ իմաստային հեռավորության առարկաներ: Քննարկումը կարող է շարունակվել՝ ավելացնելով երրորդ կողմնակի հայեցակարգը և առաջարկելով նրանց հետ հանդես գալ հայտարարությամբ:

Ասոցիատիվ մտածողությունը զարգանում է նաև մտքի քարտեզներ կազմելիս՝ դիագրամներ, որոնք բացահայտում են հասկացությունը կամ երևույթը տարբեր տեսանկյուններից: Օրինակ, երբ ուսումնասիրում եք բնական տարածքները, կարող եք քարտեզագրել հարակից հասկացությունները ձեր աշակերտների հետ կամ նման աշխատանք տալ տանը:

Պարզաբանել

Ստեղծարարական մտածողությունը ենթադրում է բառերից պատկերների, այնուհետև գործողությունների անցում, և հակառակը: Հայեցակարգը պատկերացնելու համար օգտակար է օգտագործել նկարազարդումները: Հրավիրեք երեխաներին ստեղծել նկարներ գրական տեքստի համար կամ վերացական հասկացության հիման վրա: Դուք կարող եք ոչ միայն ձեռքով նկարել, այլև օգտագործել պատկերներ ինտերնետից, կոլաժներ: Այս ամենը նպաստում է երևակայության զարգացմանը:

Կարդալ, խոսել,ուսումնասիրել և ստեղծել

Ստեղծագործական մտածողությունը անմիջականորեն կապված է առկա տեղեկատվության հիման վրա նոր գաղափարներ ստեղծելու ունակության հետ, օրինակ՝ տեքստ կամ պատկերներ: Երեխաները կարող են զբաղվել իրենց ստեղծագործական գործունեությամբ՝ ստեղծելով տարբեր գեղարվեստական

կինոնկարների, պատմվածքների,վեպերի, մուլտֆիլմի նոր մասի պատմությունը կամ այլընտրանքային ավարտը:

Գրական ընթերցանության դասերը ստեղծագործական մտածողության զարգացման համար մեծ ռեսուրս են ապահովում: Ստեղծագործություններին ծանոթանալիս կարևոր է երեխաների ուշադրությունը կենտրոնացնել հեղինակի մտադրությունը հասկանալու համար կարևոր պահերի վրա. հարցնել, թե ինչու են հերոսներն այս կամ այն կերպ գործում, թե ինչպես կզարգանա սյուժեն հետագայում և ինչպիսի պատմվածքների զարգացում կցանկանային: Այսպես երեխաները դառնում են մտածող և ստեղծագործ ընթերցողներ, որոնք կարողանում են կարեկցել կերպարներին, հասկանալ հեղինակի մտադրությունները և տեքստերում տեսնել իրական կյանքից երևույթներ: Բացի այդ, նման քննարկումները խթանում են երևակայության զարգացումը, երեխաների ստեղծագործական գործունեությունը:

Բեմականացնել

Շարունակելով աշխատել տեքստի և երևակայության զարգացման հետ՝ կարող եք երեխաներին հրավիրել ստեղծագործաբար վերապատմելու իրենց կարդացածը՝ ավելացնելով մանրամասներ և իրադարձություններ, կամ դա անել առաջին դեմքով՝ փորձելով տարբեր ինտոնացիաներ: Հաջորդ փուլը դրամատիզացումն է՝ իր դրսևորումներից որևէ մեկով՝ կարդալ ըստ դերերի, մնջախաղի, բեմադրվող ներկայացումների:

Խաղը երեխաների մոտ ստեղծարարական մտածողության զարգացման ամենաարդյունավետ միջոցն է: Դուք կարող եք օգտագործել ինչպես դերախաղ, այնպես էլ ուսումնական խաղեր:

Կարող եք նաև օգտագործել այսպես կոչված «պատմության խորանարդներ». Դրանք նման են խաղալիքներին, միայն ծայրերում կետերի փոխարեն՝առարկաների պատկերներ : Երեխաները հերթով հորինում և պատմում են պատմություններ՝ իրենց ստացած նկարի հիման վրա: Դուք կարող եք ընդհանրապես մեկ պատմությամբ հանդես գալ՝ շարունակելով միմյանց արտահայտած մտքերը:

Պատկերապատումը կարող է օգտակար ավանդույթ լինել, ավելի օգտակար կլինի, եթե երեխաները զույգերով պատմություններ ստեղծեն: Սա ոչ միայն խթանում է

երեխաների ստեղծարարական գործունեությունը, այլև թիմում մթնոլորտն ավելի բարենպաստ է դարձնում:

Ֆիզիկական ակտիվությունը կարող է օգնել նաև ստեղծարարական մտածողության զարգացմանը: Լավ է, եթե դրանք անմիջականորեն կապված լինեն դիտարկման և վերլուծության հետ:

Լուծել գլուխկոտրուկներ և հանելուկներ

Ստեղծարարական մտածողության զարգացմանը նպաստում է նաև գլուխկոտրուկների, հանելուկների լուծումը և զվարճալի առաջադրանքները: Այնուամենայնիվ, կարևոր է պատրաստ լինել երեխային օգնելու, նրան որոշման տանելու համար, որպեսզի նրա համար չստեղծվի ձախողման իրավիճակ:

Ստեղծագործական առաջընթացները պարզապես երկնքից չեն իջնում, այլ երկար տարիների քրտնաջան աշխատանքի արդյունք են: Ստեղծագործականությունը մարդու և նրա շրջակա միջավայրի, մշակույթի բարդ փոխազդեցության արդյունքն է: Իրական ուսումնառությունը և ստեղծագործականությունը պահանջում են աշակերտների ներգրավվածություն: Այն ներառում է մոտիվացիայի, կենտրոնացման, հետաքրքրության և զվարճանքի համադրության ամբողջություն, որը բխում է ինքնուրույն ուսուցման գործընթացից՝ որակներից և հատկանիշերից

Գլուխ երկրորդ: Համագործակցության ուսուցման տարրերը:

Մարդը մշտական հաղորդակցության մեջ է արտաքին աշխարհի և հասարակության հետ, ինչը մի կողմից կարևոր ազդեցություն է գործում նրա անձնական զարգացման վրա, իսկ մյուս կողմից այդ անձնավորությանն է դարձնում նման ազդեցություն ունեցող մյուսների հանդեպ:

Համագործակցություն նշանակում է մի քանի անձի թիմային աշխատանք և ընդհանուր ջանքերի գործադրում նախանշված նպատակին հասնելու համար: Դա կարող է լինել որևէ նախագիծ, առաջադրանք և այլն: Ցանկացած դեպքում համագործակցությունը միավորում է մի քանի անձի, որոնք նպատակին հասնելու համար նախանշում են տարբեր ուղիներ: Այդ ուղիներից միասին պետք է ընտրեն ամենաարագու լավագույն ուղին: Համապատասխանաբար, պտղաբեր համագործակցության համար անհրաժեշտ էունենալ արդյունավետ հաղորդակցության հմտություն՝ ճիշտ ձևավորել սեփական կարծիքը, կենտրոնանալ կոնկրետ նպատակի վրա, հարգալից վերաբերմունք ցուցաբերել և գնահատել մյուսների կարծիքները:

Վերոնշյալից բացի, արդյունավետ և պտղաբեր հաղորդակցության համար խմբի անդամների միջև պարտադիր պետք է լինի վստահություն, օբյեկտիվություն, որը ներառում է նպատակին հասնելու կամ խնդիրը լուծելու լավագույն ուղին ընտրելը, անկախ նրանից թե ում է պատկանում նախնական գաղափարը: Արդյունավետ հաղորդակցության գրավականն է գործի ճիշտ բաժանումը և պատասխանատվության զգացումը արդյունքի նկատմամբ, քանի որ ցանկացած դեպքում համատեղ կազմած նախագծի ինչպես հաջողությունը, այնպես և պարտությունը խմբի բոլոր անդամների աշխատանքի արդյունքն է:

Համագործակցային ուսուցումը այլընտրանքային մանկավարժական մոտեցում է: Այն ենթանդրում է խմբային աշխատանքի համագործակցության նոր մշակույթ:

Համագործակցային ուսուցման կարևոր պայմաններից է խմբի անդամների միջև դրական աջակցող փոխկախվածության ապահովումը:

Համագործակցային ուսուցման տարրերը վեցն են՝

1.Դրական փոխկախվածություն.

Խմբում ձևավորվում է միմյանց օգնելու, խրախուսելու, աջակցելու մթնոլորտ: Սովորողի ջանքերն ուղղվում են ընդհանուր նպատակին համատեղ հասնելուն: Այն նպաստում է հանդուրժողականության և վստահության ձևավորմանը: Քննարկումներն ու ձգտումներն օգնում են խմբի անդամների փոխհարաբերություններին:

2.Դեմ առ դեմ, խթանող փոխազդեցություն.

Խմբի անդամները համգործակցում են, փոխանակում են տեղեկություններ, կարծիքներ և ռեսուրսներ, մշակում և վերլուծում են տեղեկությունը, ապահովում են հետադարձ կապ, քաջալերում և աջակցում են միմյանց՝ ընդհանուր նպատակին հասնելու համար:

3.Անհատական հաշվետվություն և պատասխանատվություն.

Խմբի յուրաքանչյուր անդամ պատրաստ է պատասխանելու և մտքեր փոխանակելու, կրում է պատասխանատվություն ուսուցման արդյունքների համար, խմբի մաս է, գաղափարներով և մտքերով կիսվում է մյուս անդամների հետ, պատրաստ է ներկայացնելու խմբի աշխատանքի արդյունքը:

4.Սոցիալական հմտություններ.

Խմբի անդամների միջև ձևավորվում են վարքագծային նորմեր՝ անաղմուկ աշխատանք, ներկայություն մինչև աշխատանքի ավարտը, խոսողին հետևելը, առաջադրանքը կատարելիս ներդում ունենալը:

5.Խմբային գործընթաց.

Խմբի անդամների հաջողությունների, փոխհարաբերությունների, համագործակցության բարելավման հետ կապված խնդիրների քննարկման փուլ է: Դրանք զարգացնում են սոցիալական հմտությունները, ապահովում են խմբի անդամների գործողությունների և մասնակցության հետադարձ կապը:

6.Փոխներգործուն/ինտերակտիվ առաջադրանքը :

Սրա կարևոր չափանիշը այն է, որ խմբի անդամները հեշտությամբ մասնակցեն առաջադրանքի կատարմանը։

Աշակերտների թիմային առաջադիմության մեթոդ։

Այս մեթոդը խթանում է աշակերտների ուսումնառությունը։ Այստեղ էական է այն հանգամանքը, որ գնահատվում է աշակերտների առաջընթացը։ Այս մեթոդը լուրջ խթան է ցածր առաջադիմությամբ աշակերտների համար, քանի որ նույնիսկ չնչին առաջընթացի պարագայում նրանք կարող են ներդրում ունենալ թիմի արդյունքում։ Իսկ միջին ու բարձր առաջադիմությամբ աշակերտները պետք է մի կողմից՝ օգնեն իրենց դասընկերներին, մյուս կողմից՝ կարողանան պահպանել ու բարելավել իրենց նախորդ ցուցանիշները։ Այս մեթոդի առավելություններից մեկն էլ այն է, որ հնարավորություն է տրվում գնահատելու և՛ առանձին աշակերտների, և՛ խմբերին։

Խճանկար

Խճանկարի փուլերն են.

- նյութի ուսումնասիրություն և տեղեկատվության հավաքում,
- աշխատանք փորձագիտական խմբում,
- աշխատանք ուսումնական խմբում,
- ավարտական աշխատանք,
- ամփոփում։

Շրջագայություն պատկերասրահում։

Սա «Խճանկար» մեթոդի տարատեսակ է, որի նպատակն է փոխանակել տեղեկություններ, մշակել գաղափարներ և կատարել անդրադարձ, ինչպես նաև զարգացնել լսելու, ինքնուրույն աշխատելու, քննադատաբար և ստեղծագործաբար մտածելու, ցածրաձայն խոսելու, աշխատանքի արդյունքը ներկայացնելու հմտություններ։

Երեք բանալի և մեկ կողպեք։

Աշխատանքը կարելի է կատարել զույգերով կամ խմբով։ Այս մեթոդը կարելի է կիրառել այնպիսի դասերի իմաստի ընկալման փուլում, որոնք բավականին ծավալուն են, նույն նյութին կամ երևույթին վերաբերող մի շարք բնորոշ հատկանիշներ կան։ Այս մեթոդով աշխատելիս աշակերտների մեջ ձևավորվում է

ընտրություն կատարելու, գլխավորը երկրորդականից տարբերելու հմտություն, ինչպես նաև համագործակցելու, իր ընտրությունը հիմնավորելու կարողություն։

Հինգրոպեանոց ազատ շարադրանք։

Հինգրոպեանոց ազատ շարադրանքի մեթոդը կարող է կիրառվել ինչպես դասի խթանման փուլում, այնպես էլ կշռադատման՝ ելնելով դասի նպատակից և թեմայից։ Ընտրում ենք թեման և առաջարկում հինգ րոպեի ընթացքում ազատորեն շարադրել իրենց մտքերը, որից հետո դադարեցնում են աշխատանքը և ունկնդրում մի քանիսի գրած շարադրանք։

Հաղորդակցական ունակությունները կամ հաղորդունակությունները անձի այն հատկությունն է, որով նա բնականոն փոխհարաբերություններ է հաստատում ուրիշների հետ, համարժեքորեն ձևակերպում է իր ասելիքը, տեղեկություններ հաղորդում և ընդունում՝ ճշտորեն վերծանելով դրանք, ապահովելով պատշաճ հետադարձ կապը։

Հաղորդակցումը հասարակական սուբյեկտների (անձ, սոցիալական խումբ) փոխներգործության գործընթաց է, որի ժամանակ տեղի է ունենում փորձի, գիտելիքների, կարողությունների և գործունեության արդյունքների փոխանակություն։ Որպես հաղորդակցման սուբյեկտ հանդես են գալիս ինչպես անհատներ, այնպես էլ խմբեր։ Հաղորդակցությունը վերահսկում է հասարակական կյանքի բոլոր կողմերը, մարդականց, սոցիալական խմբերին։ Մարդը ապրում է ինֆորմացիոն դարաշրջանում՝ հաղորդակցության տարածման մեջ, որը կազմված է տարբեր պատկերներից, իմիջից, հաղորդագրություններից, սիմվոլներից, միֆերից, կարծրատիպերից։ Նույնիսկ առաջացել է <<տեղեկացված մարդ>> տերմինը. նրա համար հմտություն է ստանալ, մշակել և փոխանցել տեղեկատվությունը։ Հաղորդակցությունը կայանում է ոչ միայն մարդկանց միջև տեղեկատվության փոխանցմամբ, այլ նաև անձի ինքնորոշմամբ։

Ներկա ժամանակներում հաղորդակցություն տերմինը մեկնաբանվում է հետևյալ կերպ.

- կապի միջոց,
- շփում, տեղեկատվության փոխանցում մեկ անձից մյուսին (միջանձնային հաղորդակցություն),

- զանգվածային հաղորդակցություն,
- Տեղեկատվության փոխանցում հասարակության մեջ։

Գրականության մեջ միջանձնային հաղորդակցությունը ներկայացվում է երեք գործառույթների ամբողջության ձևով.

1.Փոխադարձ ընկալման և ըմբռնման (պերցեպտիվ) գործառույթ։ Հաղորդակցման ընթացքում և դրա միջոցով մարդիկ ընկալում են միմյանց, իրար մասին ձևավորում են կայուն պատկերացումներ, վարքի գնահատման չափանիշներև այդ ամենի հիման վրա նրանց միջև հաստատվում է փոխըմբռնման կայուն մակարդակ։

2.Փոխազդեցության (ինտերակտիվ) գործառույթ։ Հաղորդակցման ընթացքում և դրա միջոցով մարդիկ ազդում են միմյանց վրա, հնարավորություն են ստանում համատեղելու իրենց ջանքերը, գումարելու իրենց փորձն ու հմտությունները, ուղղորդելու դրանք որոշակի նպատակների կենսագործմանը, իրենց միասնական գործունեությունը։

3.Տեղեկատվական (կոմունիկացիոն) գործառույթ։ Մարդիկ, անմիջականորեն կամ միջնորդավորված հաղորդակցման ընթացքում, ուղղակիորեն կամ անուղղակիորեն, բնական խոսքի և արտալեզվային միջոցներով, բանավոր կամ գրավոր, միմյանց զանազան կարգի ու բնույթի տեղեկություններ են հաղորդում և ստանում, ինչպես նաև իմաստավորում դրանք, ճշգրտում, վերծանում, կուտակում, ձևափոխում, զարգացնում և այլն

Ըստ սուբյեկտների ընդգրկման ծավալի՝ հաղորդակցումը դասակարգվում է.

1.միջանձնայինի. երկու անձանց միջև դեմ առ դեմ իրականացվող հաղորդակցում

2.խմբայինի. երեք անձից մինչև 20-30 անձանց միջև հաղորդակցում

3.զանգվածայինի. այս դեպքում ընդգրկված են մարդկանց մեծաթիվ խմբեր։

Այն իրականացվում է հիմնականում տեղեկատվության տարածման հատուկ միջոցներով՝ տպագրություն, հեռուստատեսություն, ռադիո։ Ըստ տեղեկատվության փոխանցման ձևերի՝ հաղորդակցումը դասակարգվում է.

1. խոսքայինի, որի հիմնական միջոցներն են.

- բանավոր խոսք,
- գրավոր խոսք։

Ըստ հաղորդակցվող կողմերի պաշտոնական դիրքի առնչության՝ հաղորդակցումը դասակարգվում է. Ուղղահայացի, հորիզոնականի։

Առաջինն իրականացվում է ձեռնարկության պաշտոնական սանդուղքով. վարընթաց և վերընթաց ուղղություններով։ Երկրորդը՝ հավասար պաշտոնական դիրք ունեցող աշխատակիցների միջև։ Հաճախ վերջինների թվին է դասվում ձեռնարկության ենթակառույցների աշխատակիցների միջև իրականացվող ներխմբային հաղորդակցումը։

3. ոչ խոսքայինի, որի հիմնական միջոցներն են։ Դիրքը մարդու մարմնի որոշակի կեցվածքն է, որը հատկանշական է տվյալ կուլտուրայի համար. այն ցույց է տալիս, թե ինչպես է տվյալ մարդն ընկալում իր կարգավիճակը՝ ներկա մյուս անձանց կարգավիճակի հսմեմատությամբ։

Մարդիկ ցանկացած պահի խոսում են ոչ միայն լեզվով, այլև ժեստերի լեզվով ։ Ժեստերը ձեռքի, գլխի, մարմնի շարժումներ են (*ֆրանսերեն՝ժեստ-գործողություն*)։ Որքան էլ տարբերվեն կուլտուրաները, ամենուր հուզվածության աճի հետ աճում է նաև ժեստիկուլյացիայի ինտենսիվությունը։ Ժեստերի մի մասի կոնկրետ իմաստը տարբեր կուլտուրաներում տարբեր է։ Սակայն բոլոր կուլտուրաներում կան ժեստեր, որոնց նշանակությունը նույնն է։

Կինեսիկա - Հունարեն՝ շարժում։ Դրանք այլ մարդու տեսողությամբ ընկալվող շարժումներ են, որոնք հաղորդակցության մեջ կատարում են արտահայտչական գործառույթ։ Կինեսիկային են պատկանում արտահայտիչ շարժումները, որոնք դրսևորվում են դիրքերում, ժեստերում, դիմախաղում /միմիկա/, քայլվածքում, հայացքում։

Պրոսոդիկա - Շեշտադրում և արտալեզվաբանություն. Սա ընդհանուր անվանումն է. Նշանակում է խոսքի այնպիսի ինտոնացիա, որը ներառում է արագությունը, բարձրությունը, խոսակցական տոնի բարձրությունը, ձայնի տեմբրը, շեշտադրման ուժը։ Հաղորդակցման միջոցներին են դասվում դինամիկ այնպիսի հպումները, ինչպիսիք են՝ ձեռքսեղմումները, ծափահարումները, համբույրները։ Մարդու կողմից հաղորդակցման մեջ դինամիկ հպումների օգտագործումը պայմանավորված է

բազմաթիվ գործոններով: Դրանց մեջ հատուկ նշանակություն ունեն հաղորդակցվողի կարգավիճակը, տարիքը, սեռը, ծանոթության աստիճանը:

Թվում է շատ պարզ է ասել այն, ինչ մտածում ես: Բայց շատ հաճախ, երբ ցանկանում ենք մեր խոսքը փոխանցել զրուցակցին, ապա այն կարող է կորուստներ կրել վերարտադրելիս, չնայած մեր լավագույն մտադրություններին: Մենք մի բան ենք ասում, զրուցակիցը մեկ այլ բան է հասկանում արդյունքում առաջանում է անհամաձայնություն, ինչն էլ իր հերթին ստեղծում է կոնֆլիկտ: Բարեբախտաբար, կան մի շարք մեթոդներ, ուղղություններ, որոնք օգնում են ավելի արդյունավետ հաղորդակցվել: Երբ հաղորդակցվում ենք կողակցի, երեխայի, տնօրենի կամ կոլեգաների հետ, կարող ենք բարելավվել հաղորդակցային հմտությունները, որոնք հնարավորություն կընձեռեն կառուցել վստակության և հարգանքի մթնոլորտ, թույլ կտան զգալ լսված ու հասկացված: Հաղորդակցությունն ավելին է քան միայն տեղեկատվության փոխանակումը: Դա զգացմունքների ու մտադրությունների ընկալումն է, որը ընկած է հաքղորդակցությունների հիմքում: Արդյունավետ հաղորդակցումը նաև երկկողմանի ճանապարհ է: Դա միայն այն չէ, թե ինչպես պետք է փոխանցվի հաղորդագրությունը, ինչպես պետք է ստացվի և հասկացվի մեկ ուրիշի կողմից, այնպես ինչպես մենք ենք մտադրված, այլ նաև լսել և հասկանալ խոսքի ամբողջ մտադրությունը, ինչ, որ ասվում է և դիմացինին ևս դարձնել լսված և հասկացված: Հաղորդակցությունը ավելին է, քան պարզապես բառերը, որոնք օգտագործվում են: Արդյունավետ հաղորդակցությունը միավորում է հմտությունների մի շարք՝ ներառյալ ոչ խոսքային *վերբալ* հաղորդակցությունը, լսելու կարողությունը, կառավարել պահի լարվածությունը, ունենալ ունակություն պաշտպանված հաղորդակցման համար և ընդունակություն ճանաչել ու հասկանալ քո սեփական զգացմունքները և այն մարդու, ու հետ շփվում ես: Արդյունավետ հաղորդակցությունը այն սոսինձն է, որ օգնում է խորացնել քո շփումները մյուսների հետ, բարելավվել թիմային աշխատանքը,որոշումների ընդունումը և խնդրի լուծումը: Այն հնարավորություն է տալիս նույնիսկ շփվել բացասական իրավիճակներում՝ պահպանելով հարգանիքի ու վստահության մթնոլորտը: Քանի որ արդյունավետ հաղորդակցությունը հանդիսանում է հմտություն, ավելի արդյունավետ է, երբ այն ինքնաբուխ է, բնական, քան ձևական ու կեղծ: Ելույթը ընթերցելիս ավելի հաճախ չի

ունենում այն ազդեցություն մարդկանց վրա, քան այն դեպքում երբ ներկայացվում է բանավոր: Անշուշտ, ժամանակ և ջանքեր են պահանջվում այս հմտությունները զարգացնելու և արդյունավետ հաղորդակցվող դառնալու համար: Ինչքան շատ ջանք ու եռանդ, վարպետություն ներդրվի, այնքան ավելի բնական ու ինքնաբուխ կդառնան հաղորդակցային հմտությունները:

Եզրակացություն

Միջանձնային արդյունավետ հաղորդակցության խոչընդոտներ կարող են հանդիսանալ.

1. Լարվածություն և զգացմունքների անկառավարելիություն: Երբ կա լարվածություն կամ զգացմունքների անկառավարելիություն, ճնշում, ապա հասկացվածությունը այլ մարդկանց կողմից սխալ կլինի: Տվյալ դեպքում ուղարկվում են մերժումներ կամ անկանոն ոչ վերբալ նշաններ, առաջանում է անառողջ վարքային դրսևորումներ: Մի պահ հանգստացեք, նախքան խոսակցության շարունակությունը:

2. Ուշադրության բացակայություն: Ցրված անձնավորությունը չի կարող հաղորդակցվել: Հաղորդակցության ընթացքում երազելը, փաստաթղթերի ստուգումը, մտածելը այլ բաների մասին, թուլ չեն տա ըմբռնել շատ կարևոր ոչ վերբալ ազդակներ: Անհրաժեշտ է լինել կենտրոնացած վայրկյան առ վայրկյան այդ ողջ ընթացքում:

3. Ոչ համարժեք մարմնի լեզու: Ոչ վերբալ հաղորդակցությունը պետք է ուժեղացնի ասելիքը այլ ոչ թե հակասի դրան: Երբ փոխանցվում է մի բան, իսկ շարժումներով այլ բան է ցույց տրվում, ապա զրուցակիցը ամենայն հավանականությամբ կզգա, որ դուք ազնիվ չեք: Օրինակ, կարող եք ասել՝ այո, մինչդեռ գլուխը շարժել բացասաբար:

4. Բացասական մարմնի լեզու: Երբ չես հասկանում կամ համաձայն չես ասելիքի հետ, ապա կարող ես կիրառել բացասական մարմնի լեզու, կտրուկ մերժել զրուցակցի ասելիքը, օրինակ, խաչել արմունկները, խուսափել աչքերի կոնտակտից կամ թփթփացնել ոտքերը: Պարտադիր չէ համաձայնել կամ հավանել ասելիքը, կարևոր խուսափել դիմացինին բացասական ազդանշաններ ուղարկելուց: Արդյունավետ

հաղորդակցման համար շատ կարևոր է դառնալ ուշադիր, կլանված լսող։ Մարդիկ հաճախ կենտրոնանում են իրենց ասելիքի վրա, բայց արդյունավետ հաղորդակցման համար պետք է քիչ խոսել և շատ լսել։ Լսել լավ, նշանակում է ոչ միան պարզապես հասկանալ բառերը կամ տեղեկատվությունը, այլ նաև ընկալել այն էմոցիաները, որը փոխանցում է զրուցակիցը։ Շատ մեծ տարբերություն կա կլանված լսելու և պարզապես լսելու միջև։ լսելու պարագայում հասկանում ես դիմացինի ձայնային ինտոնացիայի նրբությունները, որը պատմում է, թե ինչ է զգում տվյալ անձը և այն զգացողությունները, որ նա ցանկանում է փոխանցել։ Կենտրոնացված լսելու պարագայում ոչ միայն բացահայտվում են զրուցակցի հոգեվիճակն ու տրամադրությունները, այլև նա դառնում է լսված և հասկացված, ինչն էլ իր հերթին օգնում է կառուցել ավելի ուժեղ, ավելի խորը կապ միմյանց միջև։ Այս կերպ հաղորդակցվելով՝ նվազեցվում է նաև լարվածությունը, սթրեսը, ստեղծվում է ֆիզիկական և էմոցիոնալ հանգստություն։ Երբ զրուցակիցը հուզված է ու լարված, ապա ուշադիր լսելով և հանգիստ վարքագծով շփվելով՝ նա ևս կդառնա հանգիստ, լսված և հասկացված։ Եթե հաղորդակցման ընթացքում զրուցակցի նպատակն է դիմացինի հետ հասկացված ու լսված լինելն է, ապա ուշադիր լսելը հաճախ ինքնաբերաբար և բնական է ստացվում։ Եթե այդպիսի նպատակ չկա, ապա անհրաժեշտ է հետևել ներքոնշյալ քայլերին։ Ինչքան շատ այս դրույթները կիրառվեն, այնքան բավարարված և դրական հարաբերություններ կձևավորվեն մարդկանց միջև։ Ամբողջապես կենտրոնանալ զրուցակցի վրա։ Ուշադրություն դարձնել մարմնի լեզվի, ձայնի տոնի և այլ ոչ խոսքային ազդակների վրա։ Ձայնի տոնը փոխանցում է էմոցիաները, ուստի, երբ մտածում ենք այլ բաների մասին, ստուգում փաստաթղթերը կամ մեխանիկորեն նկարում, ապա բաց են թողնվում ոչ խոսքային այնպիսի ազդակներ, ինչպիսիք են զգացմունքային արտահայտություն, կարևոր ժեստեր, որոնք ընկած են խոսակցի բառերում։ Եթե զրուցակիցը խոսում է ցրված, ապա հնարավոր է վերականգնել խոսակցությունը որոշակի հարցադրումների միջոցով, որոնք վերաբերում են տվյալ թեմային։ Եթե որոշ զրուցակիցների հետ դժվար է կենտրոնացված շփում իրականացնել, ապա անհրաժեշտ է մտքում կրկնել նրա բառերը, ինչը ուժեղացնում է հաղորդագրությունը և պահում կենտրոնացված։

4.Տեղեկատվական գրագիտություն, մեդիագրագիտություն, տեխնոլոգիական գրագիտություն

Հանրակրթության նոր պետական չափորոշչով, առարկայական չափորոշիչներով՝ մեդիագրագիտությունը նախատեսվում է ինտեգրել դպրոցական տարբեր առարկաների ծրագրերում, դարձնել այն կրթության բաղադրիչ՝ տարբեր թեմաների մեջ ներառելով քննադատական մտածողության, աղբյուրների ստուգման, մեդիա նյութերի ստեղծման, գործիքների կիրառության և այլ հմտություններ։

Օգտագործված գրականության ցանկ

1. Հայկ Պետրոսյան «Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաներ» - ԱՆ ՋՈՆ 2008
2. Անի Մկրտումյան «Դպրոցականների հետազոտական կարողությունների զարգացման ուղեցույց», Երևան 2020
3. Իրինա Չարդիմովա «Երեխաների հետ աշխատելու նախագծային մեթոդ
4. https://curriculumredesign.org/wp-content/uploads/CCR-Foundational-Paper-2021-Armenian.pdf